**Հանրապետական Նախագահ Տօ-
մեռ Յ. ՏիկՊԱ .**

**Մայրաքաղաք Պէռն 30,000 բնա-
կիչով .**

Թիւ բնակչաց երկրի 2 1/2 միլիոն :

ՓՕՐԹՈՒԿԱԼ

Թագաւոր Լոնի Ա .

**Մայրաքաղաք Լիզպօն 280 հազար
բնակիչով .**

**Թիւ բնակչաց երկրի 4 միլիոն 400
հազար :**

ՀՈԼԱՆՏԱ

Թագաւոր ԿիՅՈՄ Դ .

**Մայրաքաղաք Ամսդ երտամ 272
հազար բնակիչով .**

Թիւ բնակչաց երկրի 3,700,000 :

ՊԵԼՃԻՔԱ.

Թագաւոր ԼԵՅԲՈԼՏ Բ .

Մայրաքաղաք Պըրուքսէլ 180 հազար բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 5 միլիոն :

ՇՈՒԵՏ - ՆՈՐՎԵԿԻԱ.

Թագաւոր ՕՍՔԱՐ Բ .

Մայրաքաղաք Աթօքօլմ 150 հազար բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 5,900,000 :

ՑՈՒՆԱՄՏԱՆ

Թագաւոր ԳԵՈՐԳ Ա .

Մայրաքաղաք Աթէնք 42 հազար բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 1,350,000 :

ՏԱՆԻՄԱՐՔԱ.

Թագաւոր ՔՐԻՍՏԻԱՆ Թ .

Մայրաքաղաք Քօրէնհակ 181 հազար բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 1,760,000 :

ՄԻԱՅԵԱԼ-ՆՍՀՈՒՆԳ ԱՄԵՐԻԿԱՑԻ
Հանրապետական ՆԽգահ. ԿՐԱՆՔ.
(ԿՐԻԼԼԻ).

Մայրաքաղաք Վաշինգթոն 200 հա-
զար բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 38 $\frac{1}{2}$ միլիոն :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Շահ ՆԱՍԻՖԻՆ.

Մայրաքաղաք Թէհրան 100 հա-
զար բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 6 միլիոն :

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Այլ և այլ իշխանութեանց տակ :

Մայրաքաղաք Կալկաթա 1 միլիոն
250 բնակիչով :

Թիւ բնակչաց երկրի 150 միլիոն :

ԶԻՆԱՍՏԱՆ

Կայսր Թէնկ-Զէ .

Մայրաքաղաք Բէքին 2 միլիոն բնա-
կիչով .

Թիւ բնակչաց երկրին 400 միլիոն :

ՃԱԲՈՆ

Կայսր ՄԻՆԱ-ՄՕԹ .

Մայրաքաղաք ԵՀԹՈ 1 միլիոն բնակիչով .

Թիւ բնակչաց երկրի 12 միլիոն :

ՀԱՅՔ

ԺՈՂՈՎՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ԳԵՂՈՐԳ. Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց. Ծնեալ 'ի Կ. Պօլիս 1813 յուլիս 5. Գահակալութիւն նորա 'ի 17 Սեպտեմբեր 1866 :

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ Կ. ՊՈՂՍՈՅ

ՏԵՐ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ ԱՐքԵպ Պատրիարք Կ. Պօլսոյ :

ՀՈՂՄԵԱԿԱՆ ՀԱՅՔ

ԳԵՐ. ՏԵՐ ՔԻՒԲԵԼԵԱՆ. ՀԱԳԵԼՈՒ ՊԼՈՒ ՀՈՌԵՄԵԱԿԱՆ Հայոց :

ԵՐԱԾՈՎԱԿԱՆ ՀԱՅՔ

ՅԱԿՈԲ ԷՅ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ. ՏԵ-
ՂԱՊԱՀ Ազգապետին Հայ Բողոքա-
կանաց:

ՀՐԵԱՅՔ

Բարունապետ ՄՕԶԻ ԼԵՎԻ.

ՅՈՅՆՔ

ԱՆԹԻՄՈՍ Զ. Ծայրագոյն Պատ-
րիարք Կ. Պօլսոյ:

ՊՈՒՎԿԱՐՔ

ԱՆԹԻՄՈՍ Ա. Եքսարխոս համայն
Պուլկարաց:



ՀԱՅՀ ՊԱՐԱՀԱՅՈՅԱ

ԽԵՂԱՀ ՀԱՅ ԵՐԱԿԱՆ ՊԱՐ
ԵՐԱԿԱՆ ԽԵՂԱՀ ՀԱՅ ՊԱՐ

ՅԱԻԵԼՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ

Ականջդ իսոսած ատեն գիտցիր որ
պաղ ես առած :

Սչաց տարօրինակ երեւոյթները և
ականջին անսովոր ձայները ջղային
դրութեան անկարգ վիճակի մէջ գըտ-
նուելուն ասլացոյցներ են :

Սարսափելի երազները ստամբուլ
չափէն աւելի բեռնանւորելուն հե-
տեւանքն են :

Երկայն կեանք անցնողաց ամենն
ալ ամուսնացեալ էին :

Գլուխդ զով պահէ բարեխառնու-
նութեամբ , ոտքերպ ջերմ ըլլան աշ-
խատութեամբ , կանուխ ել և կա-
նուխ պառկէ , և եթէ չափէն աւել

պիրնալու հակամտութիւն տեսնես
անձիդ վրայ ։ աչքերդ բաց և բե-
րանդ դոցէ ։ այլ խօսքով քնոյ և կե-
րակլոց մէջ չափաւոր եղիր ։

Ուշ անկողին երթալ անկանոն սո-
վորութիւնք և կերակրոց մէջ ան-
գգուշութիւն առողջութեան հիմանցը
քով վոսեր կը վորեն ։

Ոմանք երբեմն մինչեւ արշալոյս ան-
քուն կանցնեն, մերթ ստամոքսը դա-
տարկ պահեն և մերթ զանի պայ-
թեցնելու չափ լեցնեն ։ մերթ 3-4
ժամ քնանան և մերթ 9-10 ժամ ։
մերթ դատարկ և մերթ պայթելու
չափ խցուած ստամոքսով անկողին
մտնեն ։ Այսպիսի անկանոն և ան-
կարգ կենցաղավարութիւնք մարմնոյ
և հոգւոյ առողջութիւնը շուտով քան-
թեն և խորտակեն ։

Ամենալաւ բժիշկներն են յարմար
կերակուրք, հանգստութիւն մարմնոյ
և անդորրութիւն սրտի ։ Այս կէտե-

րուն մէջ խելացութեամբ վարուողը
տեսակ տեսակ հիւանդութիւններէ
զերծ մնայ :

Ոմանք մեծ շահ համարին երբ ա-
ժան գնով ապառողջ ուտելիքներ
գնեն . խեղճ մարդիկ , չեն խորհիր
որ այս կերպով աւելցուցած դրամին
դուցէ եռապատիկը բժշկին ձեռքը
պիտի յանձնեն :

Նոր աշխարհի ողելից ըմալելին և
հին աշխարհի ծխախոտը գաշնաղրու-
թիւն մ' ընելով մարդկային ազգին
մեծ մասը իրենց շվմաններովն կա-
պեցին : Յիմար է նա որ այս գերու-
թեան մէջէն չ' ջանար դանձն և հո-
գին աղատելքանի որ դէռ հնար է ,
զի գայ օր մը որ այս կապանքներն
խղելու համար գործադրեալ ամե-
նայն ջանք ՚ի զուր պիտի լինի :

Երեւելի բժիշկ մը հառտատէ թէ
թոքախտի ընդունակ եղողներէն շա-

տերը երգելը իրենց սովորական
զւարձութեանց մին ընելով կատա-
րելալէս առողջացան :

Մաղերը , մանաւանդ ձմեռուան
ատեն , չափազանց կարճ կտրելու չէ ,
զի դիւրաւ դլխացաւի և աչացաւի
պատճառ լինի այս : Այս պատճառաւ
նաեւ ցուրտ ատեն երկայն մազերը
կտրելու չէ :

Մազի համար ներկ , բօնադ , հե-
րաբեր գեղեր , մանաւանդ ոդելից
խառնուրդներ բնաւ մի գործածեր ,
ասոնք մազին արմատներն կը չորցը-
նեն որով և մազերը սպիտականան :
Միայն չոր մազերը փոքր ինչ անմնաս
և սլարդ բօնադի կարօտին :

Կանայք մաղերնին այնքան սինտ
հիւսելու և կապելու չեն . զի ասով
մաղերուն արմատները թուլնալով
մազերն ալ թափիլ սկսին :

Կանոյք նաեւ մազերուն բաժանա
ման գիծը յաճախ վոխելու են, զի
միշտ մի և նոյն մազերն ձգուելով հար-
կաւ չուտով կը թափին :

Եղունդներուն տակի աղտը միշտ
մաքրելու է, աղտոտ եղունդը ոչ թէ
անքաղաքավարութեան նշան է այլ
նաեւ աղտը պատճառ լինի եղունդ-
ներուն տճեւանալուն և անկմանը.
զոր ոտաց եղունդներուն վրայ կը
տեսնենք :

Եղունդները պէտք չէ շատ երկնցը-
նել, ասի ոչ թէ միայն ձեռքերուն
ճանկերու նմանութիւն տայ այլ ձե-
ռաց շարժումը կարդելու, մատերն
ճնշէ և ծռէ և մսին մէջ մտնելով ցաւ
և փապար (նասըր) կը պատճառէ :

Եղուգներն շատ կարճ կտրելն և
ծամելն եւս վնասակար է. ոյսպիսի
եղունդներն խմորի դառնան և ոյլ
եւս չեն կարող մատերն պաշտօղա-

նեշ. շոշափումը կարգիլուի և մատե-
րուն ծայրերը ուսին :

Երբ ստաց մատերուն եղունգներն
շառին մարդս ոչ շարժիլ կուզէ ոչ
քալել և այսպիս զանաղան հիւանդու-
թիւնք յզանան, զի ուր չկայ շարժում
անդ յաճախեն հիւանդութիւնք :

Այն որ երկար կեանք, առողջ ստա-
մոքս և լաւ մարսովութիւն վայելել
կուզէ պարտի ատամանց մեծ հոգ և
խնամք տանիլ, կամաց կամաց ու-
տել և շատ ծամել. հին առած մը
կըսէ «ծանր ծանր ուտողը երկար
կապրի» :

Ակռայներով երբեք կարծր նիւթեր
կոտրելու չէ :

Զդուշ լեր որ կերակրոյ մնացորդք
ատամանց մէջ տեղը մնալով բերնիդ
գարշահոտութիւն և ակռաներուդ
փոտութիւն չպատճառեն :

Պաղ և ջերմ նիւթեր շուտ շուտ
միմիանց պէտք չէ որ յաջորդեն :

Ակուաներն արխւնելու չափ խառ-
նելու չէ . կերակրոյ մնացորդք զգու-
շութեամբ հեռացուր անոնց մէջէն .
ամեն կերակուրէ ետեւ կոոր մը չոր
հաց ծամէ և բերանդ լվա :

Թթու նիւթերն ակուաներն կը զնա-
սեն , երբ թթու նիւթ մ' ուտելով
ատամունք անզգայ լինին սովորաբար
«ակուաս առաւ» կըսենք . ուստի երբ
ակուադ առնէ բերանդ ջրով լվա կամ
ածուխի , խեցիի կամ կաւիճի բարակ
փոշիով մաքրէ զատամունս վրան մե-
խակի ոդի կաթեցնելով ասի բերնի
գարշահոտութիւնը նաև անհետացնէ :

Ամեն առաւօտ և կերակրէ ետեւ
ակուաներդ միջակ կարծրութեամբ
վրճինով մը շիէ առանց ատամանց
մսին զնաս տալու :

Ատամանց դեղին աղար պէտք է
ատամաբոյժի մը մաքրել տալ, ծա-
կած ակռան լեցնելու և փտտածը
հեռացնելու է :

Հաքարը ինքնին ատամանց մնա-
սակար չէ, սակայն թերնին ջերմու-
թիւնը ղանի թթուի մը կ'փոխէ որ
ակռաներուն մնաս տայ, ուստի շա-
քարեղբնը յաճախ գործածելու չէ:

Խիստանջներն ողոննել.

Կաղամբի տերեւներն կրակին ըըռ-
նելով թող որ կակզանան, յետոյ վրա-
նին անաղ կարագ քսելով խխունջ
գտնուած տեղերը դիր . խխունջք
այս տերեւներուն վրայ հաւաքին որ
ժողուելով կրնան սպաննուիլ:

Մըսիները ջննել.

Քամինուրի քսակ մը ակնողնոյ մէջ
սլահելով մլուկները հոն չեն մօտե-
նար : Կամ մլուկներուն բնակած տե-

Դերը վրձինով նէֆթ ռուհի քսէ և
ամենն ալ սատկին :

Մաշերը զօրացնել և խառցնել.

Հորթի ուղերն եփած ատեն վրայի-
պարարտութիւնը առ և հետը դըր-
դալ մը ոօմ խառնելով լաւ մը ցնցէ և
առտու երեկոյ մազերդ ատով օծէ :

Հին մեռագուղենի նորել.

Մետաքսեայ հանդերձին արտաքին
երեսը սեւ թէյի ջուրը սրսկէ և ներ-
քին կողմէն է-նի-ըրէ :

Թինուի բիշ հանել.

Եթէ հանդերձին վրայ որ և է թը-
թուէ բիծ մը ըլլայ Սալ-վօլաթիլ կա-
թեցուր բիծին վրայ և հանդերձը իր
սովորական գոյնը ստանայ :

Կարիքան .

Հանդերձի մը վրայ ճդած կարկը-
տանդ պատուացքէն բաւական մեծ
ըլլայ , եթէ ոչ լվացուած ատեն նո-

բէն պատուելով հանդերձը անդործած
ծելի լինի :

Ճանճելը ջնջել.

Առ կէս թէյի դրդալ սե պղպեղի
փոշի, թէյի դրդալ մը սեւ շաքար
և ապուրի դրդալ մ'ալ սեր, և լաւ
մը միմիանց հետ խառնելով պնակի
մը մէջ դիր և սենեակը պահէ :

Ճանճելը սուսնել.

Զօրաւոր թէյ եփէ և մէջը շաքար
խառնելով անօթներով սենեակին մէջ
դիր, ասի ճանճերը հրապուրէ և
սատկեցնէ :

Ու Լ է բիշ հանել.

Ութ տրամ նիշատըր և նոյնչափ
քըրըմթարթար լիալրա մը ջրոյ մէջ
խառնէ և շիշի մը մէջ դնելով լաւ մը
խցէ · բիծը այս ջուրիս մէկ մասին մէջ
լվա և յետոյ հասարակ ջրով մաքրէ :

ՃՇԽՆԵՐԻ ՉՆՎԵԼ.

Երբ թարմ անանուխ չ'գտնուիր
ա՛ռ անանուխի իւղը և մէջը քիչ մը
բամպակ ջարդէ և այս իւղովը լաւ մը
յադեցնելէն ետեւ ճճիներուն դրտ-
նուած տեղերը դիր . առաջի անգամ
եթէ չփախչին զեռունները կրկնելու է :

ԿԱՊՐՈՋ աղակէ կացնել.

Քանի մը գլուխ սխտորը լաթի մը
մէջ դիր և ձնշելով հիւթը հանէ . այս
հիւթով կոտրած ապակիին կտորները
լաւ մ'օծէ և իրարու կաղնելով թող
երկու շաբաթ և յետոյ գործածէ :
Կամ մարած կիբը բարակ լաթի մը մէջ
կապէ և կոտրած կտորները հաւելիթի
ճերմակով օծելէ ետեւ վրանին կիրը
թօթուէ և իրարու կաղնելով թողոր
օր մը մնայ :

ՄՐՋԵ-ՆՆԵՐԸ հետապնել.

Մրջիւն եղած տեղը քամփուր կամ
քաթոան եաղին սպունդի վրայ կա-
թեցնելով պահէ . ծառերէն մրջիւն-

Ներն հեռու պահելու համար անոնց
բունին շուրջը ձիւթէ շրջանակ մը դիր
կամ քաթռան եաղիի մէջ թաթախ-
եալ լաթ մը փաթթէ :

Անուշը նարմ պահել.

Անուշը ամաններու մէջ լեցունե-
լէն ետեւ անօթներուն բերնին մե-
ծութեանը չափ թուղթեր կտրէ և
սրիրթօփ մէջ թրջելով անուշին բե-
րանը դիր և յետոյ գոցէ . այսպէս
պահուած անուշը շէքէրլէնմիշ շըլլար:

Լուերն ջնջել.

Առ օշինդր (բէլին օթու) և 24 ժամ
ջրոյ մէջ եփելէն ետեւ այս ջրով սեն-
եակին ամեն կողմը թրջէ , լուերն
ինշպէս նաև ամեն միջատներն այս
տերեւին հոտէն զզուելով շուտով հե-
ռանան , օշինդրի տերեւներն ան-
կողնոյ մէջ գնելով լուերն անկից ալ
փախչին :

Տիար աշխեր .

Եզին լեարդը (ագ ճիյէր) կրակա-

բանին մէջ այրէ և տկար աչք ունեցողին զլուխը ծուխին վրայ բռնէ ,
5-6 օրուան մէջ տկար աշքը կը բժըշկուի այս միջոցով :

Շահնշան աշխերը ջնջել .

Օքինդը 24 ժամ՝ ջրով եփէ և շուները մէջը լվա :

Կառաղի շահնշան իստինուառաց նամար .

Երկաթ մը կրակի պէս ընելով խածուացքը և անոր եղերքը լաւ մը այրելու է անմիջապէս եթէ ոչ խածուած անձն ալ կատաղի լինի :

Ջեռտերն առիտակացնել .

Գաւաթ մը օ տը քօլօնի և նոյն չափէ լէմօնի հիւթի մէջ աճառի վաշի դիր, ասի խմոր մը շինէ , և շերտ շերտ կտրելով չորցուր . այս նոր աճառով լվացուած ձեռքերն սպիտականան :

Մակըրն աճեցնել .

Հաւասար չափ ձէթ և Ռօդ մարի:

ողի և քանի մի կաթիլ Հնդկաց ընկոյզի իւղ միմիանց խառնելով ամեն գիշեր մաղերը այս խառնուրդովս շիէ. ամէն օր չափու աւելցուր :

Մորնը համիւննել.

Հինգ տրամ ծծումբի փոշին և 10 տրամ կաթը իրար խառնէ և թողոր ժամ մը կենայ, յետոյ երեսէն կաթը ա՛ռ (առանց ծծումբին դպչելու) և մորթը անով շիէ :

Եղանգ սպիտականնել.

32 տրամ աղբիւրի ջուրի մէջ 2 տրամ ջրախտոն ծծմբոյ թթութու և մէկ արամ միւրր ուռհու խառնէ, եղունգները նախ աճառով մաքրելէ ետեւ մատին ծայրերը այս խառնուրդին մէջ խօթէ :

Թիւանառընեալ :

Ընդհանուր դարմաններն են կաթը և ձէթը: Թիւնաւորութեան որ և է նշան տեսնուած միջոցին հնար եղա-

ծին չափ կաթ խմելու է , եթէ կաթին քանակութիւնը փսխելու պատճառ լինի այլ եւս լաւ է . սակայն փսխելէն ետեւ ալ շարունակելու է կաթ խմելը : Փսխելը դիւրացնելու և ստամբուր մաքրելու համար 15 ըստէն անգամ մը կէս դաւաթ ձեթ խմելու է : Կաթ չգտնուած ատեն կրնայ ձեթ , տաք ջուր , և հաւկիթի ճերմակ խմուիլ : Եթէ թոյնը մետաղէ յառաջ եկած լինելուն վտուահութիւն կայ այլ դեղ չգտնուած ատեն առառի ջուր խմելու է :

Կայծակնահար .

Կայծակնահարը զով տեղ մը տար ,
մերկացուր վրան պաղ ջուր լից և
շփէ . քթին ամօնեաք կամ այլ զօրա-
ւոր հոտով նիւթեր բռնէ . կուրծքը
կոխելով նջելտուր և քացախով զրէխ
ըրէ . այս միջոցներն ՚ի դործ դրուած
ատեն չոր հողին մէջ երկու ոտք խո-
րութեամբ փոս մը փորելու է և եթէ
կայծակնահարը վերոյիշեալ միջոցնե-
րով դէռ չէ վերակենդանացած գլու-

խը բարձրացնելով սոյն փոսին մէջ
պառկեցնելու է զանի և վրան 4-2
ոտք հող լեցնելու է . այս պարզ մի-
ջոցը շատերն աղատած է :

Ածուխի կաղ.

Ածուխի կաղէ խեղդամահ եղողը
մաքուր օդին մէջ փոխադրէ , երեսը
պաղ ջրով և քացախով լվա , եթէ
լոկ թմրութիւն կայ մարգուն վրայ .
խոկ երբ մարած է նա յայնժամ մեր-
կացուր և վրան պաղ ջուր թափէ
և տաք բրդեղէններով չփէ մարմինը .
և ձեռքերուն և ոտքերուն տակը վըր-
ցինով չփէ և քացախով գրէիս ըրէ :
Բարիզի մէջ մարածին քանի մը դըր-
գալ ձեթ խմցնելն ետեւ գաւաթ մը
ուօմ ըմպել տան որով փախել և լուծ-
մունք պատճառի և մարածը վերա-
կենդանանայ :

Աբբեցաղ .

Արբեցողաց թմրութիւնը անցնելու
համար պէտք է գաւաթ մը ջրոյ մէջ

խահուէի դրդալմը աղ դնել և խմբը-
նել տալ:

Գլխացաւ և ժնօպի ցաւ.

ԱՅ տրամ վարդի ջրոյ մէջ 2 թէյի
դրդալ քացախ խառնէ և օրը 3-4
անգամ լաթ մը մէջը թաթախելով
ցաւած տեղին վրայ դիր : Ամեն ան-
գամին ուրիշ լաթ մը գործածելու է :

Վէղի ներդէն ցաւ.

Առ 25-30 հատ առա չայի տերեւ և
դիր 96 տրամ տաք ջուրի մէջ . կէս
ժամ մնալին ետեւ այս ջուրը թթու-
լնելու չափ քացախ աւելցուր ամա-
նին մէջ և քիչ մ'ալ մեղը դիր . ասի
օրը մի քանի անգամ կարկարա ըրէ
Անվաս դեղ մ'է ասի :

Խռովութեան .

Առ ոչխարի լեզիէն 3 կաթիլ և ար-
ծաթ դրդալով մը կանդեղին վրայ
տաքցուր և երեկոյին ականջին մէջ
կաթեցուր . առաւօտուն աճառի ջուրը

տաքցնելով ոչ բնիւյն ականջը մաքրէ :
Երեք երեկոյ կրկնէ զայս , եթէ խու-
լութիւնը ցուրտէ յառաջ եկած է այս
դեղս կը բուժէ զանի :

Տէտր և շատուոտ ան+ .

Առ 3 ցորեն սուլֆաթ տը դինք ,
10 կաթիլ ափիսոնի ողի և 16 տրամ
ջուր . խառնէ զերեքը՝ ի միասին և օրը
3-4 անգամ քանի մի կաթիլ աչաց
մէջ կաթեցուր :

Եկլան+ .

Երբեմն շլութիւնը (շաշի) աչաց զօ-
րութեան անհաւասարութենէն յա-
ռաջ գայ , ուստի առողջ աչքը կա-
պելու է որպէս զի տկարը պարտա-
ւորի առարկայից վարժուիլ : Նաեւ
ակնոյի մը (շիլ աշքին կողմի) ապակին
հանելով և անոր տեղը մէջ տեղը փոք-
ոիկ ծակ մ'ունեցող թիթեղ մը անցը-
նելով շատ շիլ աչքեր բժշկուած են :

Քէնէն նոսոկ տրիան .

Կոոր մը պաղլեղ (շապ) կամ ճեր-

մակ արջասսպ (ղաչը քըսկըլըզ) ջուրով
լուծէ և մէջը լաթի մը կամ բամնակի
մը կտոր թաթիսելով գրիչի մը կո-
թռվը քիթը խօթէ զայն, ասի եթէ
չ'դադրեցնէ արեան հոսումը քիթը
պաղ ջուր քաշելու է :

Եղունդ ծաժաղներ .

Երբ տղայք եղունդնին ծամելու
վատ ունակութիւնը ունին անոնց մա-
տերուն ծայրերը անմիաս դառն հե-
ղուկի մը մէջ թաթիսելու է . կամ թէ
մատերուն ծայրերը ձեռնոցի մատե-
րու նման պարկիկներ կապելու է :
Անհոգ պէտք չէ լինիլ այս սովորու-
թեանս բարձմանը համար զի ման-
կանց եղունդները և մատերը վնա-
սուին :

Շնչարժելունիւն .

Առ 16 արամ լաւ մեղք և 8 տրամ
քսաթօռի իւղ և միասին խտոնելով
առտու և երեկոյ այս հեղուկէն թէ յի
մը դրդալ կէր երբ դժուար շունչ
առնես :

Հայ.

Ռէշինայի կտոր մը ջուրի ամանի
մը մէջ ձգէ և անօթը բերանը գո-
ցուած կրակարանի մը վրայ դիր ·
ասկէ օդին մէջ տեսակ մը հոտ ելք
որ հաղ ունեցողին մեծ հանգստու-
թիւն տայ :

Գարշահոյ շունջ.

Առ 6-10 կաթիւ քլօրայտ տը սօտա
և գաւաթ մը ջրոյ մէջ լեցունելով
առաւօտուն խմէ : Եթէ գարշահս-
տութիւնը միտած ակուաներէն է
վերոյիշեալ նիւթէն թէյի գրգալ մը
առնելով երկու գաւաթ ջրոյ հետ
խառնէ և բերանդ լվա :

Մայառը.

Խոզի իւղ 32 տրամ քամիուր 2
տրամ փոշիացեալ լեղի 8 տրամ, և
ափիսոնի ողի 4 տրամ. միմիանց խառ-
նելով սպեղանի մը շինէ և անկողին
դտցած ատենդ դործածէ :

Զերտամն զդաց .

Ծով մտած ատեն երբ ջիղերդ քաշուին այն կողմի անդամները որ նախև առաջ քաշուիլ սկսան ուժով մը ցնցէ :

Հարբուխ .

Հարբուխ ունեցողը եթէ կէս ցորեն Ափիոնի փոշին կամ մօրֆիումը 2 ժամուան միջոցին մէջ քիմիսոտի պէս քիթը քաշելու ըլլաց կը բժշկուի :

Եկերու ցաւ .

Հաւկիթի մը ճերմակը ումի հետ խառնելով ցաւած ծիծերուն քոելու և միանդամայն ստինքները ազատ պահելու է :

Կնորսկ հլուխ .

Եխմչիրի ճիւղերէն 4 ամի առ և 288 տրամ ջրոյ մէջ բերանը գոցուած ամանով մը քառորդ ժամուշափ եփիէ , յետոյ ասի հողէ անօթի մը մէջ լից և վրան գոցելով 10-12 ժամ թող մնայ . յետոյ խառնելով

վրան 12 տրամ օ ու ուշն կամ լը վանդա
աւելցուր : Կնտակ գլուխը այս ջրով
ամեն առառ լաւ մը լվալու է :

Թափած ճաղեր .

Մազերը թափած տեղերը սոխ քսէ
մորթը այս միջոցով վերստին զօրու-
նայ և մազերը բուսնին :

Թեփոռ հլուխ .

93 տրամ ջրոյ մէջ կաղինի մեծու-
թեամբ մարած կիր դիր և թող բո-
լոր դիշերը հոն մնայ , առաւոտուն
վրայի ջուրը զդուշութեամբ թափէ և
վրան 24 տրամ քացախ լեցնելով թե-
փոտ գլուխը այս խառնուրդով լվա-
լու է : Բոլորովին անվեսաս դեղ մ'է
ասի :

Զանաղոն ցաւեկը .

Հաւկիթ մ'առ և լաւ մը զարնե-
լին ետեւ վրան 48 տրամ քացախ ,
8 տրամ բեւէկնի (թիրէմէնթի) ողի
2 տրամ դինիի ողի (սրիրթօ) և 2

տրամ քամիտուր աւելցուր և լաւ մը
զարնելով դիրար խառնելով շիշի մը
մէջ լից և 10 րոպէ շարժելէ ետեւ
խցանով մը շիշին բերանը գոցէ . կէս
ժամէն կրնայ գործածուիլ այս դեղը
Մարմնոյ որ և է ցաւած կողմը այս
դեղէն օրը 3-4 անգամ քսէ . գլխու
ցաւի համար վիզին և ականջներուն
ետին քսելու է . ասի նտեւ ջախջա-
խեալ և ճանած ձեռաց և շրթանց
համար օդտակար է :

Տեղերնուն շարժած յօդուածներ .

Հաւկիթի մը սպիտակին մէջ կա-
զինի մեծութեամբ սպազեղ դիր և
խառնէ մինչեւ որ մածուցիկ լինի .
ասի կտաւի մը վրայ քսելով ցաւած
յօդուածին վրայ դիր և թռղ վրան
մնայ մինչեւ որ չորնայ կամ տաք-
նայ . յայնժամ փոխէ և նոր դեղ դիր .
Անգամբ հորիղոնական դիրքի մէջ
պահելու է :

Խայնուած + .

Մեղուին խայթը պիծակինէն խիստ

է. առաջինը խայթած տեղը իր խայթիչը կը թողու իսկ երկրորդը միայն կը ծակէ : Ուստի մեղուէն խայթուողն նախ խայթիչը դուրս քաշելու է . զի որքան երկար ատեն խայթիչը միսին մէջ մնայ այնքան տարածի թոյնը և 'ի խորս թափանձէ . նաեւ խայթիչը բուլընջն՝ դուրս հանելու է . զի եթէ մաս մը մէջը կոտրի դեղնըն անօգուտ վնին : Խայթիչը դուրս հանելէ ետև վէրքը երկու մատերով սեխմէ . վէրքին վրայ եղջերուի իւղ (կէ յիք եաղը) քսելով շուտով կը բուժի վէրքը . խայթը ումանց մարմնոյն բնաւ չազդէր :

ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԷ ԽԱԺՆՈՒՊՆԵՐ :

Մարդ մը տունը շուն մը բերաւ . տանը կատուն և օտար շունը միշտ կուռէին . ուստի մարդը երկու կենդանիներն ալ: Բ'իելով կուզէր հաշտեցընել: Անզգամ կատուն հաշտարարին մատը խածաւ . խածուած մատը անմիջապէս ուռեցաւ մարդը առնիքա կոչուած հեղուկէն մաս մ' առնելով 12 մաս ջրոյ հետ խառնեց և ուռած

մատը նորա մեջ լվաց : « Յոպէ մը չանցած , կըսէ մարդը , « ոչ ուռեցք մնաց : ոչ տաքութիւն և ոչ ցաւ » :

Այլաժ .

Կաւիճը և ձեթը մեղրի թանգրութիւն ունենալու համեմատութեամբ զիրար խառնէ և վրան քացախ աւելցուր : Ասկից փետուրով մը ատեն ատեն այրածին վրայ քսէ : Գլխու հին վերքերու ալ աղէկ է ասի : Կիրի ջուրը ձեթի հետ խառնելով այրածի լաւ դեղ մը կըլլայ :

Ակուայ հանող Երախայտ .

Նոր ակուայ հանող երախայք բաղում հիւանդութեանց ենթարկուին որով շատերը կամ մեռնին և կամ ուղեղի հիւանդութեանց մատնուին , Աւստի երբ երախան խիստ նեղութիւն կրէ ակուան հանելու մասին ակուային վրայի մորթը զգուշութեամբ ճեղքելու է . ակուան եթէ անմիջապէս երեւան չելլէ այս ճեղքը դարձեալ

գոցուի ուստի 2-3 օրէն նորէն ճեղ-
քելու է : Ակռայ հանելու նշաններն
են երախսային բերնէն շարունակ ջուր
վազելը , մատը միշտ բերանը տա-
նելը և խածնելը :

Ակռայի ցաւ .

2-3 կաթիլ մէխսակի իւղ (քառան-
ֆիլ եաղի) բամպակի կտորի մը վրայ
կաթեցնելով ակռային ծակին մէջ
դիր . ասի ցաւն դադրեցնէ առանց
ակռային և քմաց մնասելու :

Ծակ ակռաներն .

Ծակ ակռաները լեցնելու համար
առ կութթա բէրքա կամ քառչուք
կոչուած խէժէն և տաք ջրոյ մէջ կակ-
ղացնելէ ետեւ ծակած ակռային մէջ
դիր և բերանդ քիչ մը պաղ ջուր առ
որ նիւթը կարծրանայ :

Անբարոյական անձինք ֆիզիգա-
պէս բնաւ առողջ չեն կրնար սեպուիլ

Կոպիտ, կրքուտ և գաղանաբարոյ
անձանց մանկունքը անհնարէ որ կա-
տարելսալէս առողջ ըլլան :

Գինովութեան մէջ սերունդ առ-
նող մանկունք սովորաբար վատառողջ
բժամիտ և ապուշ կըլլան :

Ընդհակառակն երբ ամուսինք զի-
րաբ եռանդով կը սիրեն, ուրախ և
զուարթ և բարոյապէս երջանիկ են
յայնժամ նոցա սերունդն քաջառողջ
և զօրաւոր կըլլան :

Քանի որ մայրը նոր էակի մը կա-
ղապարն իր մէջը կը կրէ նորա ու-
նենալու ձեւն իրմէ է կախեալ :

Ուստի մայրը պարտի զդուշ լինիլ
գողուառմէ, երկիւղէ, բարկութենէ և
մարմնոյ չպահանջած բնական չեղած
գործողութիւններէ, եթէ չուզէր որ
նոր էակը իր բնական ձեւն կորսնցնէ:

Եթե վերոյիշեալ պատճառներէն
զգուշանալու անհոգ ըլլայ տկարու-
թեանց կենթարկէ իր անձը որ իր կրած
նոր էակին վրայ փոխադրուելով նո-
րա անզօր տկար և հիւանդութեանց
յարմար կաղմութիւն մը կուտայ :

Երախան մեր ամենամեծ նկատո-
ղութիւնը պարտի վայելել : Ծառը
ծուռ չըլլար եթէ տակաւին փոքրիկ
տնկիկ մ' եղած ատենը խնամելով
հոգ տարուի որ ուղիղ վեր բարձ-
րանայ :

Նորա կենսապահ գործարաններն
այն է ստամոքսն . թռքերն , սիրտն .
մորթն , ջիղերն , ուղէղն և զգայա-
րանքներն մեծ հոգատարութեամբ
պարտինք խնամել :

Ուստի այս գործարանաց լաւ խը-
նամք տանելու համար պէտք է հո-
գատար և զգուշ լինիլ սննդեան .
բնակութեան հանդերձից մաքրու-

թեան , ընտանեկան կարգադրու-
թեանց և զանոնք խնամելու կերպին:

Ամեն առողջ երախայից համար այս
նկատողութեան կէտերը նոյն են ,
ասով կրնան նաև տկար և վատա-
ռաղջ մանկունք քաջառողջ կենաց ա-
ռաջնորդուիլ:

Երախայից կենաց առաջի երկու
տարիներուն համար պարտինք զդու-
շութեամբ նկատել նոցա սնունդը ,
շնջելիք օդը , մորթին խնամքը և մաք-
րութիւնը , հանդերձները , անկողինը
և դարմանելու կերպը :

Երախային սնունդը մօրը կաթն է .
եթէ մայրը տկարութեան պատճա-
ռան չկրնար անձամբ երախան սնու-
ցանել կաթնտու կին մ'է հարկաւոր .
սակայն նա 20 տարեկանէն վար և
35 էն վեր ըլլալու չէ . անոր ակուա-
ները առողջ և մտքուր ըլլալու են .
շունջը հոտելու չէ , ստինք ոչ խիստ

մեծ ոչ ալ խիստ փոքր լինելու են ,
նորա կաթը կապոյտի մօտ սպիտա-
կագոյն լինելու է որ եթէ ջրոյ մէջ
կաթեցնես սպիտակ ամպերու նման
երեւոյթ մը յառաջ բերէ : Բաց ՚ի
դմանէ կաթնտու կինը մաքուր բա-
րոյականութեան տէր անձ մը պարտի
ըլլալ և բուն իր երախայն ցոյց տա-
լու է և եթէ նա մեռած է մահուան
պատճառը բժշկական վկայականաւ
մը յայտնելու է :

Ապակեղէն ստինք կոչուած շիշ
նաև կրնայ երախայից կենդանեաց
կաթ մատակարարել : Այծի կամ կո-
վու կաթը մօրը կաթին տեղը կրնայ
բռնել , միայն թէ ուստի կոչուած
նիւթը ուտող կենդանեաց կաթը ե-
րախայից կը մնասէ :

Կենդանեաց կաթին մէջ նախ գաղջ
ջուր խառնելու է սակայն ջրոյ քա-
նակութիւնը կամաց կամաց պակ-
սեցնելով մանկանց 2 կամ 3 ժամը

անգամ մը զուտ դադի կաթ տալու
է . նաեւ լաւ է կաթին մէջ քիչ մը
շաքար դնել :

Երախայից ակռաներն քանի որ
դէռ չեն բուսած լոկ հեղուկ սնունդ
տալու է . հաստատուն սնունդը կը
մաշնցնէ երախայն և կը տկարացնէ
դանի :

Եթէ երախայն փսխելու ըլլայ հոր-
թի ոտքը եփէ և ջրոյն վրայէն բո-
լոր պարարտութիւնը հետացնելով
կաթի հետ խառնելով կերցուր :

Երախայն խիստ անօթեցած ատենը
պաքսիմատի վրայ ջրախառն տաք
կաթ լից և լաւ մը ճզմէլէ ետեւ լաթէ
մը անցուր և լոկ հեղուկը տուր որ
խմէ : Կրնայ նաև կաթին և միսի ջրոյ
հետ հաւկիթի դեղինը կամ ճերմակը
խառնելով և կամ կաթով եփած արա-
բուն դրուիլ :

Երախսայից համար պարզ և սնընդ-
դարար նիւթ մը կայ որ այս կերակով
կը չինուի. արարութը կաթով և հաւ-
կիթի ճերմակովն շաղախէ և ջորցը-
նելէդ ետեւ փոշի ըրէ : Այս փոշիէն
փոքրիկ դրդալ մը ջրախսառն կաթով
և շաքարով եփէ և կերցուր :

Երախսայից Յ կամ Դ ամիսէն աւելի
կաթ տալու չէ մայրը . զի այս ժա-
մանակէն աւելի սնուցանելը մօրը զօ-
րութիւնը կսպառէ և երախսային ալ
կը մնասէ կաթը դժուարամարս լի-
նել սկըսելով :

Կաթէն կտրելը կամաց կամաց ըլ-
լալու է . նաեւ երբ մայրը դադրած
է և ստինք տաք սլահելու է . զանոնք
քաղձր նուշի իւղով շփելու է : Եթէ
ստինք թոյլ են և կաթը շարունակէ
հոսիլ ստինք միշտ շփելու է և բրդե-
ղէն լաթով մը ծածկելու է որուն վրայ
սա խառնուրդը քսելու է .

Օքօտէլքօտ Ա մաս ,

Քամրուրի ողի 1 մաս ,

ԶԵՄ 4 մաս ,

Խառնէ 'ի միասին և գործածէ :

Երախայն ծնած օրէն 3 շաբաթ՝
վերջը (Ճմբաց աւելի ուշ) մաքուր օդին
վարժելու է . թէև պաղ օդը մնասա-
կար է սակայն տարուան մը երա-
խայն ասոր ալ վարժեցնելու է :

Երախային ննջարանին օդը մա-
քուր ըլլալու է . հոն լաթ չորցնելու
չէ ոչ ալ կերակուր եփելու է . ննջա-
րանի օդը ոչ խոնաւ , ոչ ցուրդ ոչ
ալ խիստ տաք ըլլալու է :


Առաջի տարին մանուկը ամեն օր
լուալու է . ջուրը 27 կամ 29 աստի-
ճան ջերմութիւն ունենալու է . լր-
ուացումը 10 րոպէի մէջ կատարուե-
լու է : Երկրորդ տարին մանուկը
պաղ ջրով լուալու է և լրուացուելէն
շուտ մը ետքը աղէկ մը չորցնելու է
որ պաղ չ'առնէ :

Երախայք նեղ և ջերմացուցիչ հանդերձներ հագնելու չեն : վնասակար են խանձարութք , պէտք է անոնց գլուխը միշտ զով պահել և վեցերորդ շաբաթէն ետեւ բնաւ չըծածկել գլուխը . ներքին հանդերձներն փոխած ատեն նոր հագցնելիքները մանկանց առաջի և ամիսներուն մէջ տաքցնելու է :




Խնայոլութեամբ շատ քիչերն կ'աղքատանան , շուայլութեամբ ամենը :

Թշնամեացդ բարիք ըրէ որ հետդբարեկամանան , բարեկամացդ բարիք ըրէ որ բարեկամդ մնան :



Ծոյլը մուրացկանին եղբայրն է :

Ընտանեաց մէջ կոխւը կը փախցընէ էրիկը :



Երկար ժամեր անկողինը մնացողը
ծոյլ և բթամիտ կըլլայ :

Զեխութիւնը բժիշկը այցելութեան
կը հրաւիրէ :

Հիւանդութիւնք անհոգութեանց
հասցուցած պտուղներն են :

Օղիի վիշերը գեղերու վիշեր տուն
կը բերեն :

Բժիշկին տալիք դրամը լուսդոյն
է խոհարարին տալ :

Դսպրոցն ասողը յիմար կը մնայ :

Այսօր ճոխ կերակուր պատրաս-
տել կուտանք, վաղը որդերուն կե-
րակուր կըլլանք :

Փոքրիկ դործքեր սերման նման
կամաց կամաց կաճին մեծնան :

Խոր գէտերը վեհ լռութեամբ կը
հոսեն . փոքրիկ վոակներն կարկա-
չող կըլլան :

Բարկացած ատենդ մէկէն մինչեւ
10 համրէ , զայրացած ատենդ մին-
չեւ 100 :

Պէտք չեղած բանը որքան աժան
ալլաց մի գներ :

Այն գործը որ դու կրնաս ընել
այլոց վրայ մի բէռնաւորեր :

Այսօրուան կատարուելիքը վաղ-
ուան մի թողուր :

Բարի սկզբնաւորութիւնը բարի
վախճանիք մը կը հասցնէ :

Ամենայն ինչ փորձէ և բարի հաս-
տատ պահէ :

Եատ անդամ երբ կը կարծենք թէ

իյնալու վրայ ենք արդէն յաջողութիւնը մեր գրանը մօտեցած է և մենք չենք տեսնէր զանի :

Ամեն տեսակ վերքի համար սպեղանի չը դտնուիր :

Դիտողութիւնը ամենալաւ ուսուցիչն է . ամեն դեսլքերէ չանա դասմ' առնել :

Դժբախդութեան դիմանաւչը կը ցողն թշուառ է :

Շատ թշնամիներ ունեցողը աղէկութիւն մը ունենալու է :

Անհանգիստ խիղճ մը ամենամեծ նեղիչն է :

Ով որ փարաներն ըստ սրժանոյն կը գործածէ լիրաներն ինքնիրեննուն կը հաւաքուին :

Փայտի կտորուանք կը վա-
ռեն իսկ հաստ հաստ կոճեր զանի
կը մարեն :

Կրտկի հետ խաղացողն կայրի :

Բազում խոհարարք երբ մէկտեղ
գործեն ապուրը կտրեն և անհամ
կընեն :

Կամայ շոայլութեան յաջորդն է
ակամայ կարօտութիւն :

Քու ներկայութեանդ առջին ու-
րիշը քննադատողը անտարակոյս զքեզ
աւայլոց առջին սիտի դատավարուէ :

Յող քու դերականցութիւններդ
ուրիշներն տեսնեն և սկատմեն , դու
կոյր և համր լեր անոնց նկատմամբ :
Պատմաւթեան ամենամեծ անձինքը
ամենէն խոնարհ էին :

Եթէ չես ուզեր այլոց ծաղուն և
կատակին առարկայ ըլլալ միշտ բնա-
կան ձայնովդ խօսէ , այսինքն ինչ որ
ես ճիշդ այնպէս ալ ցոյց տուր :

« Մեր օրական հացը տուր , աղօթա-
քին պատասխանն է « քու օրական
պարտքերդ կատարէն :

Ունայն խօսքերն մութ տեղը ար-
ձակեալ նետերու կը նմանին . չես գի-
տեր թէ որո՞ւ սրտին պիտի թա-
փանցեն :

Մի հարցնէր թէ այս ինչ ճշմար-
տութիւնը ո՞վ է ըսեր , այլ ականջ
դիր ըսուածին և դործադրէ :

Կրից դէմ մագ առելով մարդս սրտի
անդորրութիւն կստանայ , ոչ թէ ա-
նոնց հետեւելով :

Մարմնոյդ դեղեցկութեանը և չքե-
ղութեանը վրայ մի պարծենար . թե-

թեւ հեւանդութիւն մը զանի կրեայ
ամենատղեղ , ատելի և զգուելի
ընել :

Արտիդ գաղանիքները ամենուն մի
յայտնէր :

Հարուսաներուն շողոքորթութիւն
մի ընէր :

Կանանց սէռին հետ այնքան մտեր-
մակական յարաբերութիւն ունենալը
վնասակար է :

Դատ անդամ անծանօթ մէկը հե-
ռուէն լոյս ըլլալ կը կարծեմք, բայց մօ-
տը եկած ատենը բուն խաւար է նա :

Աւելի դիւրին և ապահովէ հնա-
զանդիւքան իշխել :

ԾԽԱԽՈՏ

Հին ազդաց մէջ տեսակ մը չոր
խոտ ծխելու սովորութիւն կար . ուս-
տի հաւանական է որ ծխախոտի գոր-
ծածութիւնն Ասխայէն համայն աշ-
խարհ տարածուած է : Սակայն շա-
տերն կը պնդեն թէ Ամերիկայէն այս
բոյսը ուրիշ տեղեր դացած է , զի
Մէքսիքայի Թապաքօ դաւառին մէջ
նախ Սպանիացիք զանի գտնելով ա-
նունը Թապաքօ կոչեցին և այսպէս
նոյն անունը բոլոր Եւրոպայի մէջ
ընդունուեցաւ : Սպանիոյ Քօրթէվը
կամ ազգային ժողովը թագաւորին
սոյն բոյսին օրինակը 1519 ին խրկեց .
Այս Ֆրանսեղ Տրէյք 1560 ին Անդ-
դիայ բերաւ . քիչ մը ետեւ Ճօն Նի-
քօթ զանի Գաղղիայ անցուց ուսկից
Սանթա Քրօզ կարդինալը իտալիա
փոխադրեց :

Եւրոպայի մէջ քաղաքական և կրօ-
նական կառավարութիւնք ծխախոտ
գործածողաց դէմ ելան : Պապին նը-
գովքներու և բանադրանաց կոնդակ-

ներն և տէրութեանց օրէնքներն զանի
գործածողին ամենածանր պատիժ-
ներն եւ մինչեւ անդամ մահ կսպառ-
նային : Ճէյս Անդղիոյ թագաւորը
զանի «մեղսալից և ամօթալի ցան-
կութիւն» էլ անուանէ . «արբեցողու-
թեան ճիւղ մը , սպառիչ մարմնական
գօրութեան և ընչից . վնասակար ա-
չաց , ատելի հոտոտելեաց . կործանիչ
ուղեղի , աւերիչ թոքերու» : Արգիլ-
ուեցաւ որ առանց բժիշկէ մը և տէ-
րութենէն արտօնագիր ունենալու 21
տարեկան ըլլալէ յառաջադոյն ոչ ոք
ծխէ : Փողոցները և 'ի ներկայութիւն
հասարակութեան ծխելն արդիլեալ
էր ծանր տուգանքով . պանդոկներու
մէջ եթէ ծխախոտ գործածուէր սյլ
եւս հոն հիւր շէր կրնար յաճախել :
Դպրոցակաց խստ'ւ արդիլեալ էր
ծխախոտ դործածել առանց դպրոցին
նախագահին , ծնողաց և բժիշկի մը
արտօնագրին : Ժողովքո որոշեց եր-
կաթեայ վանդակ մը շինելով կիրակի
օրը ծխողք հոն բանտարկել : Որքան

օրէնքը կարդիէր, ծխախոտի գործածութիւնը այնքան կընդհանուրանար. անանկ որ եկեղեցական պաշտամանց առեն եկեղեցեաց մէջ ալ ծխել սկսան. ուստի գրամական տուգանքով մը այս ալ արդիլուեցաւ: Ընդդէմ եկեղեցական և քաղաքական օրինաց, տուգանաց, բանտարկութեանց, բանադրանաց և տեսակ տեսակ պատիժներու ծխախոտի գործածութիւնը բոլոր աշխարհի շրջագայեց և համայն ազգեր մարդկութեան իր իշխանութեանը հպատակեցուց:



ՔԹԱԼՈՒՏ

Ծխախոտի գործածութիւնը սկըսուելին քիչ մը ետքը քթախոտը գըտնուեցաւ: Գաղղիոյ մէջ Լուի ՓԳ. իթագաւորութեան ատենը (1610-1643) սկսուեցաւ քթախոտի գործածութիւնը: Ուրպան Ռ. պապը, Անդղիոյ Եղիսաբէթ թագուհին և Ռու-

սիոյ կայսրը քթախոտը ծանր պահ
տիժներով արդիլեցին : Սակայն հոս
ալ օրէնքը և պատիժը ապարդիւն
եղան և բազում ազգեր թէ շատ և
թէ քիչ այս իշխանին ալ խոնարհու-
թիւն կընեն թէև նա ծխախոտին նման
բոլոր աշխարհ իրեն չէ կարողացած
հպատակեցնել :

Հեռաղիտակով երկնից կամարն դի-
տած ատեննիս աստղ մը կը տեսնենք
որուն լոյսը մէկ վայրկէնի մէջ 12 մի-
լիոն մղոն ճամբայ առնելով 3 ու կէս
միլիոն տարիէն աշխարհիս կը հասնի :

Գօմէթք կամ դիսաւոր աստղերը
երկու մաս ունին -- գլուխ և պոչ --
Ասոնք ալ արեգական շուրջն կը շըր-
ջին և ումանք ալ շատ ժամանակի կը
կարօտին սոյն շրջանը ընելու . նոցա
թիւն անստոյգ է : Արակօ 7 միլիոն
կը կարծէ , իսկ Քէրլը ծովուն մէջի

ՃՈՒՂԵՐՈՅՆ ՀԱՓԻ : ԱՆՌՈՆՔ ԻՐԵՆԾ ԼՐՋՄԸ
ԱՐԵԳԱԿԵՆ ԿԱՌՈՆԵՆ և ԱՆԵՐԵՎԱԿԱ-
ՅԵԼԻ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ ԻՐԵՆԾ ՀՐՋԱՆԸ
ԿԸ ԿԱՄԱՐԵՆ : 1811 ին ԵՐԵՎԱԾ ԳԻ-
ՍԱԼՈՐԸ 3,000 ՄԱՐԲԻՆ ԱԼԵԼԻ ԺԱՄԱ-
ՆԱԿԻ ԿԸ ԿԱՐՈՉԵՐ ՀՐՋԱՆԸ ԸՆԵԼՈւ
ՀԱՄԱՐ : ՆՈՐԱ ՄԵՐՃԱԿԵՄՆ (ԲԷՐԻԿԵԼ
ԿԱՄ ԱՍՏղԻ ՄԸ ԱՐԵԳԱԼԻԲՆ ԱՄԵՆՔՆ
ՄՕՄ ԵՂԱԾ ԴԻՐՔԸ) 98 ՄԻԼԻՊՆ 700 ՀԱ-
ՊԱՐ ՄԼՈՆ ԷՐ , և ՀԵՇԱԿԵՄԸ (Ա.ՎԻԿ-
ԼԵՈՆ ԿԱՄ ԱՍՏղԻ ՄԸ ԱՐԵԳԱԿԵՆ Ա-
ՄԵՆՔՆ ՀԵՇՈՒ ԵՂԱԾ ԴԻՐՔԸ) 40 ԵՐԿԻ-
ՄԻՊՆ 121 ՄԻԼԻՊՆ ՄԼՈՆ ԷՐ : 1843 ի գի-
ՍԱԼՈՐԲԻՆ ԱԼՈՅԸ 200 ՄԻԼԻՊՆ ՄԼՈՆ ԵՐ-
ԿԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՐ և ԺԱՄԸ 1 ՄԻԼԻՊՆ
317 ՀԱՊԱՐ ՄԼՈՆ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ Ա-
ՐԵԳԱԿԻՆ ՀՈՒՐՋԸ ԿԸ ԴԱՌՆԱՐ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

Տէր իմ, ըսաւ պարոն մը բժիշկին,
խնդրեմ ինձ քնանալու համար դեղ
մը տուէք, ամիս մ'է որ աջերս գո-
յած չեմ:

Բժիշկը Աբիոն տուաւ անքուն պարոնին և խրկեց :

Հետեւեալ առաւօտ մարդը դարձեալ բժիշկին դալով, տօքթօր, ըսաւ, Աբիոնը ինձ օղուտ մը չըրաւ :

Բժիշկը Քլորօֆօրմ տուաւ, սակայն այս ալ 'ի զուր :

Եթէր տուաւ, բայց այս ալ օղուտ չըրաւ և պարոնը ամեն օր դալով բժիշկէն քնարեր դեղ կուղէր :

— Բայց, սիրելիս, ըսաւ բժիշկը յուսահատական ձայնով մը, քնարեր դեղերն ամենն ալ արդէն ձեզի տուի ի՞նչ է պատճառը որ չէք կրնար քընանալ :

— Ա՛, կը ներեք պարոն տօքթօր ըսաւ անքուն մարդը, առւնս լի է մըուկներով :



Բլինիուս իր բնախօսութեանը մէջ չնդկաստանի սահմաններուն մօտ բնակող ազգ մը կը յիշէ որոնք այնքան երկայն և լայն ականջներ ունին որ ինքզինքնին անոնցմով կրնան ծած-

կել : Ուրիշ գրքի մը մէջ ալ կը կար-
դանք թէ Արնչէթօ կղզիին վրայ տե-
սակ մը մարդիկ կը դանուին որոնց
ականջներն այնքան ընդարձակ են որ
եթէ պառկին մէկ ականջը իբր ան-
կողին խել միւսը իբր վերմակ կը գոր-
ծած են :

Գերմանիոյ քաղաքներուն մէջ սո-
վորութիւն է մարդ մը մեռնելուն
պէս եկեղեցւոյ զանդակներն զար-
նել : Անդամ մը կոչկակար մը դա-
տաստանին մէջ իրաւունքը կորսնցը-
նելով ժամկոչին գնաց և խնդրեց որ
զանդակը զարնէ : Ժամկոչն սկսաւ
զանդակներն զարնել : Ժողովուրդը
կը հարցնէր թէ ո՞վ է մեռեր .

— Դատաստանարանէն արդարու-
թիւնը մեռեր է . — պատասխանեց
կոչկակարը :

Կրակագոյն քիթով Հնդիկ մը օր մը
կը քնանար , իր խափշիկ ծառան ալ
քովը կսպասէր : Ճանձ մը քնացող

մարդուն երեսին վրայ բառական առ
տեն թռչտելով անոր քիթին վրայ
կանգնեցաւ և շուտով նորէն թռչիլ
սկսաւ : Օ՛խ , ըսաւ խարշիկը , ասի
տեսնելով , ո՞րքան լաւ եղաւ որ ուս-
քերդ այրեցան :

Մարդ մը սովորութիւն էր ըրած-
ձիով ժուռ դալ և իշու կաթ խմել :
Հիւանդ մը օր մը ասոր հտրցուց թէ
ո՞ւսկից կառնէ իր դեղերը որ այն-
քան առողջ է : Բարեկամ , ըսաւ մար-
դը , իմ բժիշկս ձի մ'է և դեղագործս
էշ մը :

Հայր մը իր տղան կը համոզէր որ
կանուխ ելլէ անկողինէն , և կը պատ-
մէր թէ մարդուն մէկը առաւօտուն
կանուխ դործի գացած ատենը փո-
ղոցը քսակ մը ոսկի է գտեր : — Հա-
ւատա՛ , հայր իմ , ըսաւ տղան , եթէ
քսակը կորսնցնողը քիչ մ'աւելի պառ-
կած ըլլար ոսկիները չի պիտի կոր-
սընթներ — :

Զայքսիս և Փարասիուս, Երկու
նկարիչք, միմիանց հետ կը մրցէին :
Առաջինը խաղողի ողկոյզներ նկարեց
որոնք այնքան բնական երեւոյթ մը
ունէին որ թռչուններն գալով կը
կտցէին: Երկրորդը վարագոյր մը նկա-
րեց և հրաւիրեց Զայքսիսը որ գայ
և զանի տեսնէ: Զայքսիս նկարեալ
վարագոյրը բնական կարծելով խընդ-
րեց որ վեր առնէ . սակայն տեսնե-
լով որ խաբուեցաւ ըստ . Փարա-
սիուս, դու յաղթեցիր, զի ես թռո-
չուններն խարեցի իսկ դու վարագետ
նկարիչ մը խարեցիր :

Գոլ մը տունէ մը երեք վերարկու
յափշտակեց . ճամբան դէմը մարդ
մը ելաւ որ թեւին վրայ վերարկու
մ'ունէր : — Ուսկից առիր այդ վե-
րարկուները, հարցուց ասի աւագա-
կին : — Սա տանը պարոնները տուին
ինձ որ մաքրեմ: — Բարի, ըստ մար-
դը, ա՛ռ իմ վերարկուս ալ և մաքրէ,
սակայն երեկոյին ժամը 10 ին անշուշտ

բերելու ես : — Այդ մասին բոլորովին անհոգ եղիք , ըստ գողք , և վերարկուն առնելով ալ մէջ մ' ալ չերեւցաւ :

—

Քալիկուլա : Հռովմայ կայսրերէն մին , աստեղագուշակի մը վրայ բարեկանալով ըստ թշուառական . ըսէ նայիմ , ի՞նչ տեսակ մահով պիտի մեռնիս : — Զերմով , պատասխանեց աստեղագուշակը : — Ստախօս . անպիտան , պօռաց կայսրը , ահա սուտ կըսես . դառն պիտի ըլլայ քու մահդ , և հրամայեց որ գլխատեն զանի :

— Վեհափառ տէր , ըստ աստեղագուշակը կայսրին , երբ դահիճը զինքը գլխատելու կը պատրաստուէր , վեհափառ տէր : Հրամայեցէք որ բազկերակս զննեն և պիտի տեսնէք որ Զերմս բռնեց : Այս խօսքերն աստեղագուշակին կեանքն ազատեցին :

—

Իոլանտացի մը առաջի անդամ իստալիա մտած առենը կըսէր . ի՞նչ

ղարմանալի ժողովուրդ մ'է այս . Հոս
տղայք անգամ իտալերէն կը խօսին
և իմ լեզուս ոչ ոք հասկնայ :

Տիկին մը Բրուսիոյ Սեծն Ֆրէտէ-
րիք թաղաւորին ներկայանալով ը-
սաւ . Տէր արքայ , էրիկս հետս շատ
գէշ կը վարուի :

— Ատի իմ խառնուելու բանս չի
ըսաւ արքան :

— Բայց ամուսինս քեզի համար ալ
շատ գէշ կը խօսի , ըսաւ կինը :

— Ատի ալ քու խառնուելու բանդ
չէ , սպատառխանեց թաղաւորը : —

Այլոց գործին մի խառնուիր զի
քեզի վերաբերող գործոց կարդադըր-
մանը համար հազիւթէ կենացդ հա-
մար որոշեալ ժամերը կը բաւեն :

ՀԱՆԵԼՈՒԿԻ

(Հանելուկին ըստով հինգ քրանդաց
ժեր + մը կընդուածի , երբ պիմ առ հեղի-
նակն օրացաց յէ մը կնկեան ճշադան
Մերժան):

1.

Աքանչելի քաղաքներ ,
Կանաչ են նոցա տներ ,
Եւ խրձիթք և պալատներ .
Հոն կան խիստ լայն ճամբաներ ,
Եւ նեղ անցուկ փողոցներ ,
Զորս զարդարեն ծաղիկներ ,
Այս քաղաքաց բնտկիշներ ,
Ունին գոհունակ սրտեր ,
Զի հոն լսուին միշտ երգեր :

2.

Արեսուն և մէկ օտարներ ,
Համբը և մունձ պարոններ ,
Մին միւսին աննման —
Օր մը մըսան Հայաստան :

Նոցա միտքն չէր հասկցուեր ,
Արդ հասան եօթն թարգմաններ ,
Որոնք հազիւ թէ եկան ,
Համբերն խօսիլ սկսան ,
Եւ նոցա քաղցրը ձայներ ,
Էսեն ցարդ Հայկազուններ :



ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԳՈՐԾԱՐԱՆ

ԵՒ

ԹՂ.ԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Դ, ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ. Պօլիս Առլիթան - Համամ թիւ 14



ԹՂ.ԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Սոյն թղթավաճառատան մէջ կը
գտնուին ամէն տեսակ ընտիր թուղ-
թեր թէ պրի թէ տոլադրութեան ,

թէ նամակի, և թէ սիկառի, և ա-
սոնց ամենուն թէ սպիտակ և թէ գու-
նաւոր ամէն տեսակներէն :

Կը գտնուին նաև պատրաստ շի-
նուած հաշուակալութեան տոմար-
ներ ու տետրակներ թէ հատով և թէ
քաշով վաճառելի, և փափաքողին ալ
ուզուած ձեւովն ու տեսակովը կը
շինուին, թէ պարզ և թէ ընտիր
ամենաժան գներով : Նաև դպրոցա-
կան և գծագրութեան տետրակներ,
և տպագրութեան մելան :

ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹ

Կը շինուին աժան գնով կը բոպայէն
եկած ամէն տեսակ սիկառի թուղ-
թերուն ճիշդ նմանները, և եթէ ուզ-
ուի շինել տուղն իր անուան համար
ալ կրնայ շինել տալ յատկապէս, ուզ-
ուած մեծութեամբ և տեսակով . շատ
առնողին մասնաւոր գնէն զէղջ կը լլուի

ՏՊԱՐԱՆ

Հայերէն, Տաճկերէն, Գաղիերէն

և Յունարէն լեզուներով և մաքուր
տպագրութեամբ թէ զիրք թէ հաշ-
ուեցուցակ և թէ ամեն տեսակ տետ-
րակներ կը տպուին գոհացուցիչ գնով։

Կը տպուին նաև գեղեցիկ և զար-
դագիր տառերով և դունաւոր տպա-
գրութեամբ այցաքարտ (քառթ տը
վիզիթ) նամակադլուխ եւս։

ՓՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԼՎԱ- ՆՈԿՐԱՖԻ

Թէ փայտի և թէ պղինձի վրայ փո-
րագրութիւն կը լլայ ուզուած պատ-
կերի կամ որ և իցէ բանի։ Նաեւս
պղնձի մաքուր կալվանական տախ-
տակներ կը շինուին ամեն տեսակ
պատկերներու։

ԿԱՂՄԱՏՈՒՆ

Որ և է տեսակ գիրք և տետրակ
մաքուր և աժան գնով կը կաղմուի,
թէ կաշեկազմ թէ թղթակազմ և թէ
լաթակազմ և թէ հասարակ։

ՊԱՀԱՐԱՆՔ .

Ամէն տեսակ ձեւաւոր ստուարաթղթէ տուփեր կը շինուին պարզթէ ընտիր և թէ ոսկեզօծ :

Փափաքողը կրնայ իր մասնաւոր անուանը ալ շինել տալ :

Նաև կը շինուին ամեն տեսակ նամակի պահարաններ :

Ասկից զատ կրնան շինուիլ դպրոցական սլայուսակներ (չանթա) թէ դժագ բութեան և թէ ուրիշ պիտոյից իր ամէն կերպերովը :

ՍՏՈՒԱՐԱԹՈՒՂԹ. (մուգավա)

Խնդրուած մեծութեամբ և տեսարկով ստուարաթուղթ կը շինուի գոհացուցիչ գնով՝ որ յատկապէս զլանէ (սիլինտր) անցած ըլլալով դրէթէ Եւրոպայէն եկածներուն կը հաւասարի, քանզի զուտ թուղթէ շինուած ըլլալուն համար աւելի դիմացկուն է, և եթէ ուղուի կրնայ ուղուած մեծութեամբ ալ կտրուիլ :

Վերոյիշեալ գործարանը՝ իւր ա-
մէն ճիւղերուն մէջ փափաքելով որ
ազնիւ հասարակութիւնը ո'չ թէ գոր-
ծարանի մը բռնած սկզբանցը ծա-
ռայ ըլլայ, այլ գործարանը հասա-
րակութեանը նպատակին ծառայէ .
կը ծանուցանէ թէ՝ վերոյիշեալ վա-
ճառքներուն ու շինուածքներուն որ
տեսակէն որ ուզուի թէ մեծութեամբ
և թէ մաքրութեամբ, թէ ընտրու-
թեամբ և թէ քանակութեամբ նոյնը
մատակարարելու պատրաստ է, և
փափաքողը կրնայ դիմել, Կ. Պօլիս
Սուլթան Համբամ թիւ 14 վաճառա-
տունը . և եթէ գաւառներէն ուզուի
ուղղակի յարաբերութիւն ունենալ
պէտք է հասցէն ուղղել առ

Գ. Զարթարեան

K. Zartarian

کیغورق ظارطاریان

ՅՈԹՅԿՐԱՖ

Գ. ՄՕՂԵԱՆ

Կ. Պօլիս Մահմուտ - բաշա Շաստղքմբ
Փողոց թիւ 1. Քիւրքմի խանի դէմը.

Ֆօթօկրաֆ Գ. Մօղեանը որ վերոյիշեալ ֆօթօկրաֆհանէն փոխադրած է իր գործարանը. կը ծանուցանէ արգոյ հասարակութեան թէ պատրաստէ ամէն օր առաւօտէ մինչեւ երեկոյ իրեն դիմող յաճախորդները ընդունիլ որոնք ըստ ամենայնի գոհ ընելու ամէն պատրաստութիւնք ըրած է:

Նա և արժան գներով տուներու մէջ պատկեր քաշելու վիզիթա տալն ալ կը ծանուցանէ Գ. Մօղեան :

Ֆօթօկրաֆի արհեստը քիչ ժամանակի մէջ կատարելապէս սովորիլ բարաքողք կընան Գ. Մօղեանի դիմել :



ՀՐԱՄԱԳԻՒԹ

Հրատարակելի Խմբագրութեամբ
Ա. ԱՄԵՐԻԿԱՆԵԱՆԻ ԵՒ
Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

Այս լրագրով սլիտի հրատարակ-
ուին Փաղաքական, Ուսումնական,
Մտաւորական, Բնական, Բարոյա-
կան, Ազգային, Բանասիրական,
Պատմական, Փաղաքավարական, Ըն-
տանեկան, Բժշկական, Երկրագոր-
ծական, Մեքենական և ուրիշ ար-
ուեստական այլ և այլ կարեւոր և
օդտակար նիւթեր :

Լրագրոյս տարեկան բաժանոր-
դագինն կտնիսիկ է մէկ Օսմանեան
ոսկի 150 թերթի համար :

Գաւառաց համար պէտք է բու-
տայի ծախքն ալ վճարել :

Ստորագրութեան տեղն է խառ-
ջիւղ Բարմաք-քարու Ամիրխոսնեանց
վարժարանը :

ԱՄԻՐԻԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԽԱՍ-ԳԻՒՂ


Առյն վարժարանիս մէջ, ուր արդէն 40 ցերեկօթիկ աշակերտք և և աշակերտուհիք կը դաստիարակուին, գիշերօթիկ աղջկանց համար ալ ամեն պատրաստութիւնք եղած են: Աղջիկնին հոն խրեն փափաքողք պէտք է դիմեն առ անօրէնն վարժարանին Ա. · Ամիրխանեանց :

Խասզիւղ Բարմաք-քարու :

ԲԺԻՇԿ

ՏՕՔԹՈՐ Կ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Բժիշկ Վիրաբոյժ և Մանկարաճ. Յիշեալ ճարտար Տօքթօրը Գում-քարու Պատրիարքարանի փողոցը դեղավաճառին կից տունը կը բնակի և Զորեքշարթի օրերը ժամը ծէն մինչեւ 10 աղքատաց ձրի կը նայի :



ՎԱՃԱՌԱՏՈՒԵՆ
Ա. և Տ. Ա.ՍՈՏՈՒՐԵԱՆՑ

Բերա . Գուլէ-քարու . Հենտէկ փողոց
Սոյն վաճառատանս մէջ կըդ տնուին
Եւրոպայի և Ամերիկայի տեսակ տե-
սակ ապրանքներ և զանազան լեզ-
տաւ գրեանք , մանաւանդ տօքթօր
Ա. Ասատուրեանի Հայ-Անդղ . Քերա-
կանութիւնը :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ
ՏՕՔԹՕՐ Ա. ԻՍՉԱՏՈՒՐԵԱՆ
ԵՒ

ՏՕՔԹՕՐ Կ. ԱՏԵՓԱՆԵԱՆ
Կ. Պոլիս Պահմէ քարու թիւ 5.

ԱԱՀԱԹ-ՃԸ, ՔՈՒՅՈՒՄՃՈՒ
ԳԱԼԷՄՔԵԱՐ ՎԵ ՍԱՎԱԹ-ՃԸ

ՄԿՐՏԻՉ ԳԱԼԻՖԱԵԱՆ
Սուլթան - Համամ Ն ° 24 :

ԲԵԼԻԵՐԱԳԻՐ

Պատուի ընդունութեանը .

Ես, Աէնէքէրիմ, հզօր թագաւոր, Ասորոց երկրին թաղաւորը, Լաքիս քաղաքին առջեղատաստանական գահին վրայրագմած, անոր (քաղաքին) բնակիչները սպաննելու արտօնութիւնը կուտամ:

(Բաղդատէ այս թարգմանութիւն

նը Արքաղան Մատեանին Դ. Թագաւորաց Ժ. Գլխուն 13 և 14 համարներուն հետ):

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆՑ

ԱՐՁԱՆԱԳՐԱԼԻԹԻՒՆ

ԾՆՆԴՈՑ

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԿՐՅՈՒԹԵԱՆՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱՀՈՒՑ

Հայաստանցի և Պօլսեցի,
Քաղաքացի և զիւղացի ,
Երիտասարդք , արք և կոմայդ
Օրիորդք և փոքրիկ տղայք ,
Հարուստ աղքատ և դործ առու
Դալրոցական , արհեստաւոր ,
— Օրացոյցիս մէն մի է էն ,
Շատ օդուտներ կը վայ թէ :

Գին 2 ԴՐՆ.

2020

